

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն աշխատանքային այցով եղավ Ճամբարակ քաղաքում

13.04.2016

Ապրիլի 13-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը Ճամբարակի քաղաքապետարանում աշխատանքային խորհրդակցություն անցկացրեց Ճամբարակի տարածքի համայնքների ղեկավարների հետ՝ քննարկելով գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, պետության կողմից համայնքներում հրատապ լուծում պահանջող ծրագրերի իրականացման, Արցախի մեր հայրենակիցներին եւ տարածքի համայնքներից առաջնագծում գտնվող կամավորներին աջակցելու հետ կապված խնդիրներ: Կառավարությունը պատրաստակամ է ըստ պահանջարկի տնտեսություններին հատկացնել սուբսիդավորված դիզվառելիք, սերմացուներ եւ պարարտանյութեր: Առաջարկում եմ ամենասեղմ ժամկետներում ներկայացնել հայտացուցակները, որպեսզի տնտեսությունները կարողանան ժամանակին իրականացնել գյուղատնտեսական աշխատանքները: Մյուս կողմից հորդորում եմ՝ գարնանացանի կատարման խնդիրներում աջակցություն ցուցաբերել այն ընտանիքներին, որոնց անդամները հայրենի սահմանները պաշտպանելու նպատակով այս պահին գտնվում են Արցախում,-նշեց մարզպետը: Մարզի ղեկավարը համայնքների ղեկավարներին տեղեկացրեց նաև, որ այս տարվա ընթացքում պետբյուջեի միջոցներով Ճամբարակի տարածաշրջանի համայնքներում կիրականացվեն հրատապ լուծում պահանջող բազմաբնույթ ծրագրեր: Հրատապ լուծում պահանջող այն ծրագրերը, որոնք բարձրացվել են նախորդ տարվա ընթացքում, ՀՀ կառավարության կողմից տրամադրված միջոցներով կիրականացվեն այս տարվա ընթացքում: Ճամբարակ քաղաքում կիրականացվեն խմելու ջրի մատակարարման համակարգի նորացման եւ ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ,-նշեց մարզպետը: Այցի ընթացքում մարզի ղեկավարը քաղաքապետարանում կատարեց քաղաքացիների ընդունելություն, ապա եղավ Ճամբարակի առողջության կենտրոնում, որտեղ խորհրդակցություն անցկացրեց բուժանձնակազմի եւ գորակոչային հանձնաժողովի հետ: Տեղում քննարկելով առկա հիմնախնդիրները՝ Ռաֆիկ Գրիգորյանը հանձնարարեց հաստատության բուժանձնակազմը սեղմ ժամկետներում համալրել նեղ մասնագետ կադրերով եւ բարձրացնել գորակոչային հանձնաժողովի աշխատանքային պատասխանատվությունն ու արդյունավետությունը: Ամենայն պատասխանատվությամբ ու մասնագիտական պարտքի գիտակցումով պետք է հետագոտել յուրաքանչյուր նորակոչիկի, ժամանակին ի հայտ բերել նրանց մոտ նկատված առողջական խնդիրները եւ անել հնարավորը, որ մեր երիտասարդները բանակ գորակոչվեն բացառապես առողջ վիճակում,-կարեւորեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: